

# ՏՐԻԴՐԻԽ ՄՅՈՒԼԼԵՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## Է. Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառում իր մշտական ու հաստատուն տեղն ունի 19-րդ դարի գերմանացի ականավոր լեզվաբան, պատմահամեմատական լեզվաբանության և լեզվաբանական ազգագրության հիմնադիր ներկայացուցիչներից մեկը՝ Ֆրիդրիխ Մյուլլերը:

Մյուլլերը ծնվել է 1834 թ. մարտի 5-ին Եմենիցում (Մորավիա): Սկզբնական կրթությունն ստացել է Մորավիայի Ջնայիմ քաղաքում: Վաղ հասակից տեղափոխվել է Վիեննա, որ և ուսանել է բանասիրություն, հատկապես լեզվաբանություն: 1853—57 թթ. սովորել է Գյոթինգենի համալսարանում: 1858 թ. պաշտոն է ստացել Վիեննայի համալսարանի մատենադարանում, իսկ հետո՝ 1861 թ. նշանակվել է արքունական մատենադարանի վերատեսուչ, այդ պաշտոնը վարել է երկու տասնյակից ավելի տարիներ և հրաժարվել 1884 թ. աչքերի տկարության պատճառով:

Դեռևս ուսումնառության տարիներից սկսած Մյուլլերը հանդես է բերում ակնառու ունակություններ և՛ լեզուներ սովորելու, և՛ դրանք գիտականորեն ուսումնասիրելու մեջ, մի զբաղմունք, որին անմասնորոպ նվիրվեց նա՝ մինչև իր կյանքի վերջը չդադարելով ուսումնասիրելուց «ամեն ժամանակի և ամեն ազգաց լեզվաց» հնչյունաբանությունն ու ձևաբանությունը: Մեծ եռանդով սովորում է հին լեզուներ՝ Հեթման Բոնիցի (հունարեն) և Անտոն Բոլլերի (սահակրիտ ու բակտրիական (զենդ)) մոտ: Հետզհետե ավելի է ընդարձակվում Մյուլլերի կողմից ուսումնասիրվող լեզուների ցանկը՝ եբրայերեն, արաբերեն, տաճկերեն և այլն՝ ընդհուպ Ամերիկայի և Օվկիանիայի բնակիչների լեզուները:

Իտալացի բանասեր, հայազետ Էմիլ Դեզան ահա թե ինչ է գրում լեզուներ սովորելու Մյուլլերի ունակությունների և նախասիրությունների մասին. «Ավելի հեռավոր իրաց, քան թե մոտակայից կրթործներ լուր մտադրությունը՝ թե տեղյաց, թե ժամանակի վերաբերությամբ, որով պրովենսալեն (գավառաբանութենե) առաջ և ավելի եթովպերեն ուսավ, սերբերենեն ավելի մալեզական լեզուն, մանավանդ թե կրևաք ըսել, որ նորագույն լեզվաց համար համակրանք չէր տաժեր և ոչ գուցե Եփրատսի երգերուն հունարենը Սոփոկլեսի լեզվին չափ հետաքրքրության առիթ ընծայեց իրեն, և կամ վանեցոց խոսածը Խորենացվո գրածին հավասար, և դեռ ավելի զարմանալի է, երբ գիտեսք, որ բռնեմացվոց մոտ ապրելովն հանդերձ անհոնց լեզվին և մատենագրության այնքան հմտություն չուներ»<sup>1</sup>:

1866 թ. Մյուլլերը կարգվում է Վիեննայի համալսարանում համեմատական լեզվաբանության և սանսկրիտի արտաքեր կարգի ուսուցիչ, իսկ երեք տարի հետո՝ 1869-ին ստանում է օսուցչապետի տիտղոս և նույն տարին էլ ընտրվում կայսերական գիտությունների ակադեմիայի անդամ:

Երբ Մյուլլերը կատարում էր իր գիտական առաջին քայլերը, լեզվաբանության մեջ բռուն վերելք էր ապրում պատմահամեմատական մեթոդը, կատարվում էին լեզուների դասակարգումներ, համեմատական քննությամբ որոշվում էր նրանց ցեղակցությունը: Մյուլլերը ևս սկսում է զբաղվել լեզուների համեմատության ու ցեղակցության հարցերով: Աշխարհի տարբեր լեզուների իմացությունը նրան հնարավորություն է տալիս կատարելու լեզուների ընդհանուր դասակարգման փորձեր: Այս ուղղությամբ կատարած իր երկարամյա աշխատանքի արդյունքները, ինչպես նաև իր նախորդների նվաճումները Մյուլլերն ամփոփեց 1876—1888 թթ. լույս տեսած «Լեզվաբանության հիմունքներ» եռահատոր աշխատության մեջ: Այստեղ Մյուլլերը ներկայացնում է աշխարհի ամենատարբեր մասերում ապրող ժողովուրդների լեզուները, տալիս նրանց ճերականության նկարագիրը: Առաջնորդվելով երիտբրազիլականական ուղղության հիմնադրույթներով, այսինքն՝ հետազոտությունները կատարելով հնչյունական օրենքներով և այսպես կոչ-

<sup>1</sup> «Բազմավեպ», 1898, էջ 342:

ված «մաքուր» նյութի վերուծությամբ՝ Մյուլլերը ձգտում է գտնել ուսումնասիրվող լեզուների միջև ծագումնաբանական ընդհանրություններ և ըստ այդմ դասակարգել: Նա ավելի շատ ուշադրություն է դարձնում քիչ կամ բոլորովին չուսումնասիրված լեզուներին և ոչ միայն տալիս է նրանց քերականությունների նկարագիրը, այլև բերում է նրանցից լեզվական նմուշներ ընթերցանության համար: Եվ եթե իր ժամանակի լեզվաբանական մտքի զարգացման համար բավական կարևոր նշանակություն ունեցած այս աշխատությունն այսօր կորցրել է իր նախկին արժեքը, սակայն նրա վերջում գետեղված հարուստ ընթերցարանը մինչև այժմ էլ բախասիրական և լայն, և նեղ առումներով քննությունների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Գիտական երկարատև հետազոտությունների արդյունք է նաև Մյուլլերի «Ընդհանուր ազգագրություն» աշխատությունը, որը հեղինակի կենդանության օրոք ունեցել է երկու հրատարակություն. առաջինը՝ 1873 թ., իսկ երկրորդը՝ 1879 թ.: 1884 թ. Կիեննայում լույս է տեսնում այս աշխատության հիման վրա կազմված ազգագրական առաջը:

Քանի որ Մյուլլերի նախասիրությունը հին, ինչպես նաև աշխարհի տարբեր ծայրերում բնակվող ժողովուրդների լեզուներն էին, բնականաբար նրա ուշադրությունից չէր կարող վրիպել հայոց լեզուն: Ենի Դեզայի վկայությամբ Մյուլլերը ոչ միայն ուսումնասիրում է գրաբարը, այլև հայ որոշ բարբառներ՝ «Վանեցոց խոսածը Խորենացվոյ գրածին հավասար»: Այդ ուսումնասիրություններն այնքան լուրջ բնույթ կրեցին, որ Մյուլլերն իր ողջ գիտական գործունեությունը նվիրեց հայոց լեզվի ուսումնասիրությանը:

«Հայկական լեզվին ուսումնա թե յուր ներքին հատկություններով և թե իրանական լեզվաց տոհմին հետ ունեցած աննչությունը շուտով նորա հոծարական ուշադրությունը գրավեց, որչափ որ գաղտնապահ չողոր տեսներ, այնչափ ալ յուր ետանդը կվառեր գաղտնք մեկդի առնելու՝ օգնելով ընդհանուր բանասիրական հետազոտությանց: Երբեք իրեն դեղնումն կամ ցավ չէր պատճառեր մեկ մը կտրած ծամիան դարձյալ հետ դառնալ և յուր խակության հասակի երկունքը հասունացյալ պտուղներով կատարելագործել, և այս ջանքն ալ մինչև յուր կենաց վերջն ընկերեց իրեն, այնպես որ հայ տառից ձայնագրության վրայոք ըրած վերջին առաջարկությունները հազիվ թե այժմ տարվո մը շրջանը կբոլորե»<sup>2</sup>,— գրում է Է. Պեզան Մյուլլերի մասին մտախոսականում:

1860 թվից Կիեննայում հրատարակվող գիտական տարբեր պարբերականներում Մյուլլերը լույս է ընծայում հայոց լեզվին նվիրված իր ուսումնասիրությունները: Նրա գիտական երախայրիքը հայոց լեզվի բարձրանցների և թվականների մասին երկու մասից բաղկացած հոդվածն էր, որով հիմք դրվեց Մյուլլերի թե՛ գիտական և թե՛ հայագիտական ուսումնասիրություններին:

Հայոց լեզվի տարբեր բաժինների ուսումնասիրությունը Մյուլլերը կատարում էր զուգահեռաբար: Դրանց մեջ հատկապես մեծ տեղ է հատկացված հայոց լեզվի ձևաբանության խորքերին: Մյուլլերի հետազոտությունների համար նյութ են դարձել հայերենի բարձրանցները, սահմանական եղանակի անկատար և կատարյալ ժամանակաձևերը, թայի երկրորդ դեմքի և վերջավորությունը, կատարյալի և ստորադասականի ց անանցը, անուն խոսքի մասերի՝ գոյականների, թվականների, դերանունների կազմության, հոլովման, հոլովական վերջավորությունների, շեշտի ազդեցությամբ նրանց կրած փոփոխությունների և այլ հարցեր, ք մասնիկի ծագումն և այլն: Այս հարցերը քննվում են հնդեվրոպական այլ, հատկապես իրանական, լեզուների համեմատությամբ: Դրանցից շատերը հայագիտության մեջ առաջին անգամ էին դառնում ուսումնասիրության նյութ: Մյուլլերի քննություններն աչքի են ընկնում խոր գիտականությամբ, համեմատությունների բազմաթվությամբ, և մինչև այսօր էլ դրանցից շատերը չեն կորցրել իրենց նշանակությունը: Փաստորեն այս ուսումնասիրություններով Մյուլլերը համեմատական լեզվաբանության մեջ հայերենի քերականության համեմատական ուսումնասիրության սկզբնավորողներից մեկը եղավ: Մինչև Մյուլլերը հնդեվրոպաբաններից Պետերմանը, Կիևի շմառնը և ապա հատկապես Բուպպը սանսկրիտի և հնդեվրոպական այլ լեզուների համեմատությունների հետևանքով բավականաչափ դիտողություններ էին արել հայերենի հոլովման և խոնարհման վերջավորությունների, նրանց ծագման և այլ լեզուների հետ ունեցած ընդհանրությունների վերաբերյալ: Ի տարբերություն նախորդների Մյուլլերը հայերենի քերականության քննությունը կատարում է ոչ թե լեզուների ընդհանուր համեմատական քննության Ֆռնի վրա իբրև լեզուների առնչակցությունների, տարբեր լեզուների միջև եղած ընդհանրությունների (նաև տարբերությունների) համար անհրաժեշտ լեզու, այլ իբրև այդ լեզվի հատուկ ուսումնասիրության՝ նրան նվիրված մի շարք առանձին աշխատանքներ: Այս պատճառով էլ հայերենի ձևաբանության հարցերը Մյուլլերի կողմից ներկայացվում են ավելի մանրամասն և բազմակողմա-նորոն: «Հայկականը»-ի բոլոր պրակներում, նաև առանձին գրքերով՝ «Հայերենի բայերի խոնարհման մասին» (Կիեննա, 1863), «Հայկական անունների հոլովման շուրջը» (Կիեննա...

<sup>2</sup> «Բազմավեպ», 1896, էջ 342:

1864) և բազմաթիվ հողավձևերով Մյուլլերը քննության առավ հայերենի խոնարհման և հոլովման մի շարք կարևոր հարցեր:

Հայերենի բայական համակարգի քննության ժամանակ Մյուլլերը հատկապես ուշադրություն դարձրեց բայական ածանցների, հիմնակազմիչ մասնիկների, խոնարհման վերջավորությունների վրա:

Հայտնի է, որ Մյուլլերը, ինչպես և իր Նախորդները, հայերենը համարում էր իրանական խմբին պատկանող լեզու, ուստի խոնարհման ձևերի քննությունը նա կատարում էր պարսկերենի համեմատությամբ, բայց և միաժամանակ պետք է նշել, որ նա ուսումնասիրությունների ընթացքում չէր կարող չտեսնել հայերենի խոնարհման մեծապես շեղվելը պարսկերենի խոնարհումից: Մյուլլերի հետազոտությունների հիմքը դարձավ այդ տարբերությունների պարզաբանումն ու բնութագրումը:

Հայերենի խոնարհման համակարգի վրաբերյալ Մյուլլերի կատարած ուսումնասիրությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ<sup>3</sup>.

1. Բավական հստակորեն սահմանազատել է հայերենում ժամանակների կազմության ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը:

2. Ընդունելով, որ հայերենի դիմախի վերջավորությունները ծագում են անձնական դերանուններից՝ Մյուլլերը ցույց է տալիս սահմանակալ եղանակի ժամանակաձևերի վերջավորությունների ծագումնաբանական ընդհանրությունները: Նա գտնում է, որ սահմանակալ եղանակի անցյալ անկատարի և անցյալ կատարյալի վերջավորությունները կապվում են ներկա ժամանակի վերջավորությունների հետ և վերջիններին ձևափոխությունների արդյունք են: Նա ծիշտ կերպով նկատում է անկատար և կատարյալ անցյալների վերջավորությունների ընդհանրությունը (անկատար անցյալ -ի, -իր, -ր, -աք, -իք, -ին և անցյալ կատարյալ -ի, -եթ, -աք, -իք (էք), -ես) և տարբերությունը, որը նա համարում է անկատարում -ի-ի առկայությունը: Սակայն անընդունելի են այն բացատրությունները, որ Մյուլլերը տալիս է այդ վերջավորությունների ծագման, հատկապես անցյալ անկատարի ժամանակաձևերում գոյության ունեցող յ-ի մասին: Վերջինս նա ծագումնաբանորեն կապում է as եական բայի s > լ ձևափոխության հետ: Ընդհանրապես խոնարհման համակարգում Մյուլլերը մեծ տեղ է հատկացնում եական բային: Այսպես, նա գտնում է, որ անցյալ կատարյալի, ստորադասական ապառնիների ց-ն ևս առաջացել է as եական բայից՝ հնդեվրոպական s-ի հայերեն ց հնչյունափոխությամբ:

3. Իր Նախորդների նման ընդունելով չորս խոնարհում՝ ա, ե, ի, ու՝ Մյուլլերը տարբեր խոնարհիչների առաջացումը կապում է հնդիրանական a-ով հիմքերի հետ (որոնց a-ն մեղքվել է e-ի, u-ի), իսկ ի խոնարհումը՝ ըստ սանսկրիտի \*ya-ի հետ:

4. Առաջին իսկ աշխատանքներից անդրադառնալով բայակազմությանը՝ Մյուլլերը տարբերակեց կազմության հինգ խումբ. ա) անվանական և բայական հիմքերով պարզ բայեր, բ) ներկայի հիմքում նա, նու ածանցավոր բայեր (բառնալ, դառնալ, առնուլ). գ) -ա-նա—ածանցավոր հիմք (գո-ան-ել, անց-ան-ել). դ) չ-ածանցավոր բայեր (աղ-ա-չ-ել) և վերջապես ե) տարբեր ածանցներով կազմված այսպես կոչված բազմաձանց (կամ խառն) խմբեր. մեղ-ան-չ-իլ, երկ-ն-չ-իլ և այլն:

5. Նշվեց, որ թեև Մյուլլերը հայերենը կապում էր իրանական լեզվի հետ, բայց նա չէր կարող չնկատել, որ հայերենում ձևաբանական շատ երևույթներ անմիջականորեն կապվում են հնդեվրոպական հիմք լեզվի հետ: Այսպես, հայոց լեզվի կմնոտ հարցերից ք հոգնակի ձևի առաջացման խնդիրը թե հոլովման և թե խոնարհման մեջ, որը բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տվել: Առաջին անգամ այս հարցին անդրադարձել է Բոպպը և ք-ն կապել սանսկրիտի \*as վերջավորության \*s-ի հետ: Մյուլլերն ընդունում է այս կարծիքը: Նույն կերպ և հետևելով Բոպպի կցման տեսությանը՝ ստորադասական առաջին ապառնու ձևերը կապում է սանսկրիտի համապատասխան ձևերի հետ. նա գտնում է, որ առաջին ապառնին ներկայի հիմքի և եական բայի ստորադասականի ձևերի կցման արդյունք է: Մյուլլերը ենթադրում է, որ գոյություն է ունեցել նաև անցյալ կատարյալի ստորադասական՝ գոյական հիմքով և փ ապառնու վերջավորություններով. սիրեաց—իցեմ, սիրեաց—իցես, -իցե, -իցեմք և այլն:

Հետաքրքրական են նաև Մյուլլերի դիտողությունները հայերենի անուն խոսքի մասերի և հատկապես հոլովման վրաբերյալ: Մյուլլերը ձգտում է իր Նախորդների նման հոլովման համակարգի առանձին օրինաչափությունների բացահայտությամբ տալ ողջ համակարգի բնութագիրը: Սակայն այստեղ ևս հայերենի՝ իրանական բնույթի մասին տեսակետի պատճառով չեն սահմանազատվում փոխառյալ և բնիկ տարրերը միմյանցից, որի հետևանքով թույլ են տրվում վրիպումներ և սխալներ:

<sup>3</sup> Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1891, էջ 181, 1894, էջ 293, «Բազմավեպ», 1898, էջ 342—348, 482, Թ. Ղաթազուլյան, Հին հայերենի խոնարհման սիստեմը, Եր., 1963, Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, Ա. Ղազարյան, Հայի հին գրական լեզվի պատմություն, Կ. Ա, Եր., 1958:

1. Հայտնի է, որ սկսած Կինդիշմանից հայերենի հոլովումը բաժանվում է երկու խմբի՝ «ձայնավորային» և «բաղաձայնական»։ Ընդունելով այս բաժանումը՝ Մյուլլերը հավելվածներ և ճշգրտումներ է կատարում նրա մեջ<sup>4</sup>։ Ըստ Մյուլլերի և՛ «ձայնավորային», և՛ «բաղաձայնական» հիմքերն ունեցել են նախնական հիմքեր։ Միաժամանակ նա հոլովման այս երկու տեսակների միջև տեսնում է ծագումնաբանական կապ, այսինքն՝ «բաղաձայնական» հիմքերից առաջացել են «ձայնավորային» հիմքերը և հակառակը։ Իր նախորդների նման ընդունելով «բաղաձայնական» թ-ով և ն-ով հիմքեր՝ Մյուլլերը գտնում է, որ նախկինում թ հիմք ունեցող որոշ բառեր անցել են «ձայնավորային» հիմքի (բիր-բիլություն), իսկ ն «բաղաձայնական» որոշ բառեր նախկինում «ձայնավորային» հոլովում են ունեցել, ինչպես դաշն բառը, որը ըստ Մյուլլերի ծագում է a-ով հիմքից։ Հայերենում խառն հոլովումների գոյությունը Մյուլլերը համարում է զուգահեռ հոլովումների արդյունք։

2. Ըստ Մյուլլերի հայերենի «ձայնավորային» հիմքերը ծագում են երեք հիմքերից՝ a, i, u, վերջիններին հնչյունային տարափոխությունների հետևանքով, որոնք տեղի են ունեցել, ինչպես ընդունում էին հնդեվրոպաբանները, այդ հնչյունների ճեղքման հետևանքով։ Այդ ծանապարհով a հիմքից առաջացել են ա, օ, ի, ի-ա, ու հիմքերը, i-ից՝ ի, ա հիմքերը, u-ից՝ ու հիմքը և այլն։

3. Մյուլլերն աշխատել է պարզել հայոց լեզվի հոլովական վերջավորությունների ծագումը։ Սեռականի յ-ն նա կապում է \*sh-ի հետ, բացասականի է-ն (որի բացատրությունն ընդհանրապես դժվարություն է հարուցում լեզվաբանների համար) Մյուլլերը կապում է իրանական abha-ին, մի ձև, որը մի քանի անգամ հանդիպում է Ափեստայում։ Գործիականի ք-ն, որը շատերը կապել են հնդեվրոպական գործիականի —bhi-ի հետ, Մյուլլերը (նաև Հյուբշմանը) փորձում է այլ կերպ բացատրել, սակայն վերջիվերջո հանգում է \*bhi-ին։ Հոգնակի ք-ն (ուղղական և գործիական հոլովներում) կապում է սանկրիտի āsas-ի և իրաներենի āhah-ի հետ, իսկ հոգնակի ց-ի ծագումը մթին է համարում։

4. Մյուլլերն ուշադրություն է դարձրել հայերենի հոլովական վերջավորությունների անկման մեջ շեշտի դերին։ Ըստ Մյուլլերի հայերենի շեշտը սկզբնական շրջանում տեղայնացված չի եղել և հետագայում է դարձել վերջնաթեր, որոշ դեպքերում՝ նաև նախավերջնաթեր։ Անշեշտ վերջին վանկերը թույլ արտասանվելով՝ կամ ընկել են, կամ հնչյունափոխվել, որի հետևանքով շեշտակիր վանկը դարձել է վերջնական։ Հետաքրքրական է նշել այն, որ հայերենը հայնարեելով իրանական լեզու՝ Մյուլլերն այս երևույթի պատճառը համարում է մի որևէ թշ իրանական լեզվի ազդեցություն։

Անշուշտ հայերենի ձևաբանության մասին Մյուլլերի դիտողությունները չեն սահմանափակվում ներկայացվածով։ Այստեղ նշվել են նրանք, որոնք իրենց ժամանակին ունեցել են կարևոր նշանակություն հայոց լեզվի ձևաբանության համեմատական ուսումնասիրության համար, մի քայլ առաջ են մղել այն և այսօր էլ չեն դադարում հետաքրքրություն ներկայացնելուց։

Իր գիտական գործունեության ընթացքում Մյուլլերն զբաղվեց հայոց լեզվի պատմության համարյա բոլոր բնագավառների ուսումնասիրությամբ, որոնցից կատարած եզրահանգումների հիման վրա ձգտեց որոշել հայոց լեզվի ցեղակցության հիմքերը։

Իր նախորդների (Պետերման, Կինդիշման, Լագարդ) նման նկատելով հայերենի բառապաշարում իրանական շերտը և այն համարելով իրանական լեզուների հետ ունեցած ցեղակցության արդյունք՝ Մյուլլերն ևս պաշտպանում է հայերենի՝ իրանական լեզու լինելու տեսությունը։ Այս հիման վրա էլ առանց տարբերակելու բնիկ և փոխառյալ բառերը հայերենում՝ կատարում է հետազոտում իր ձևաբանական ընտելությունները։ Ջանք ու իրանական նախալեզուն չի պահպանվել, նա իր ուսումնասիրությունները կատարում է հենվելով արևելյան և արևմտյան իրանական հին լեզուների՝ հին բակտրիերենի և աքեմենյան բևեռագրերի լեզվի տվյալների վրա<sup>5</sup>։ Թեև 1875 թ. Հյուբշմանը «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում» խիստ հանգամանորեն, փաստական նյութի տրամաբանական վերլուծությամբ ապացուցում է հայերենում իրանական բառաշարի փոխառյալ լինելը, որով էլ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում համարում է առանձին ճյուղ, Մյուլլերը չի ընդունում Հյուբշմանի տեսությունը։ Ավելին, նա միանգամայն ժխտում է հայերենի սեբադազակցությունը եվրոպական լեզուների հետ։ 1877 թ. գրած «Հայոց լեզվի դիրքը հնդկագերմանական լեզուների շարքում» աշխատությունում Մյուլլերը գրում է. «...հայերենը մի իրանական լեզու է, հատկապես ոչ բակտրիականի ու հին պարսկերենի դուստր, այլ հին բակտրիականի ու հին պարսկականի հետ մի ուրիշ, մեզ անծանոթ՝ հին իրանական լեզվից առաջացած իրանական լեզու»<sup>6</sup>։ Ըստ Մյուլլերի հայերենը ծագում է մի գավառաբարբոսից, որն առանձնացել է նախկին իրանականից այնպես,

<sup>4</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 33—35։

<sup>5</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 35։

<sup>6</sup> Էդ. Աղաբաբ, Հայ լեզվաբանության պատմություն, հ. Ա, Եր., 1958, էջ 184։

ինչպես բևեռագիր արձանագրությունների պարսկերենը՝ Ավեստայի լեզվից: Նա հայերենը համարում է ոչ թե պարսկականի կամ ավեստականի դուստր, այլ ջուլյր երկու իրանական գավառաբարբառների:

Իր հետազոտությունների ընթացքում Մյուլլերը չէր կարող չնկատել հայոց լեզվի աղերսներն այլ լեզուների հետ: Նա գրում է. «Հեշտ կարելի է թույլ տալ միևնույն ժամանակ, որ հայերեն լեզուն սերտ կապակցություն ունի սլավո-լիտվական լեզուների հետ, որոնք իրանյան լեզուներին ազգակից են, կապակցություն, որ պարզ երևում է կոկորդային հնչյունների պահպանության և / ու / հնչյունների բաժանման մեջ»<sup>7</sup>: Ինչպես արդեն ցույց տրվեց, Մյուլլերը հայերենի ջերականական համակարգի ուսումնասիրության ժամանակ հաճախ է շեղվում իր տեսակետից և հայերենի ձևաբանության որոշ երևույթներ բացատրելիս ընդունում է, որ դրանք չեն կապվում իրանական ոչ մի լեզվի հետ և ոչ-իրանական լեզվի ազդեցության հետևանք են: Գուցե և եթե առիթ լիներ հայերենի ցերակցության մասին հետազայական գրելու, Մյուլլերը այլ բան գրեր, հնարավոր է, որովհետև հայտնի չէ, թե ինչ աղբյուրների հիման վրա էր Արայանը այս հարցի կապակցությամբ գրում է. «Ասվում է, նույնիսկ, թե Մյուլլերն էլ կյանքի վերջում ընդունել է Հյուսիսային տեսության ճշտությունը, սակայն այդ ոգով ոչինչ չի գրել»<sup>8</sup>:

Հյուսիսային Մյուլլերի հետազոտությունների գլխավոր թերությունը համարում է այն, «որ նա խնդիր չի դրել ապացուցելու, որ հայերեն բառերը, որոնք հնչյունապես համընկնում են պարսկերեն համապատասխան բառերին, պարսկերենից փոխառյալ չեն: Ասկայն եթե մեզ ծանոթ» հայերենը փոխառություններ ունի արամեերենից և հունարենից»<sup>9</sup>, ապա բոլորովին էլ անսպասելի չէ, որ նրանք փոխառություն կկատարեին նաև լեզվից մի հզոր ու զարգացած երկրի, որի հարևանությամբ դարձրել շարունակ ապրել են: Իհարկե, Մյուլլերը չէր կարող այս հանգամանքը ի նկատի չունենալ: Ահա թե ինչ է գրում այդ մասին Հյուսիսայինը. «Ընդհանուր առմամբ այդ ընդունում է նաև Ֆր. Մյուլլերը, ջանի որ իր մի բարեկամական նամակում (1874 թ. հուլիսի 28), որտեղ նա հայերենը եռանդով իրանական լեզու է հայտարարում և նույնիսկ չի ուզում այն անցման օղակ ծանաչել, գրում է. «Որ հայերենում նախադասարարներից ներթափանցած շատ օտարաբանություններ են հանդիպում, ակներև փաստ է (ընդգծումը մերն է— է. Մ.): Բայց ես վախենում եմ, որ կարող են որևէ բառ, որն իսկապես հայերեն է, օտար բառ համարել, միայն որպեսզի կարողանան ժխտել հայերենի իրանական բնույթը»<sup>10</sup>: Հյուսիսային օտարաբանության մասին սուկ ընդհանրապես հայտարարելը բավարար չի համարում: Նա գտնում է, որ լեզվի բնույթը որոշելու համար պետք է անպայման վստահ լինել, որ հետազոտության նյութը օտար չէ: Միայն այս դեպքում է հնարավոր ճիշտ տեսություն մշակել:

Երբ Հյուսիսայինը կարողացավ որոշել հայերենում պարսկերենից փոխառությունների փարցը, դրանով նա մեծապես նպաստեց պարսկերենի հնչյունաբանության ուսումնասիրությանը: Բայց այդ ժամանակ դեռևս հնարավոր չէր տարբերակել իրանական հարավ-արևմտյան բարբառները կենտրոնական և հյուսիսային բարբառներից: Եվ ահա Մյուլլերը լույս աշխարհ է հանում Թուրքիայի մանիքեական իրանական բնագրերը և դրանով գիտնականների ծեղքն է տալիս այնպիսի վավերագրեր, որոնցից մի ջանիսը գրված են հարավ-արևմտյան բարբառների լեզվով: Մեծի հավաստմամբ այդ վավերագրերի մի մասի լեզուն «համարյա նույնն է, ինչ որ սասանյան արձանագրությունների և մազդեական բնագրերի պահլավերենը (բացառությամբ գաղափարագրերի կիրառության, որից խուսափել են, և գրչության մեջ հնաբանությունների բացակայության), իսկ մյուսները գրված են բացահայտորեն հյուսիսային մի բարբառով կամ գրեթե հյուսիսային ձևերով լի մի բարբառով»<sup>11</sup>: Մեյեն բարձր է գնահատում այս վավերագրերը, որովհետև վերջիններիս շնորհիվ տրվում է շատ ստուգաբանությունների բանալին, պարզվում են հարավ-արևմտյան և հյուսիսային բարբառների ամենալուրջինակ գծերը, տարբեր բարբառների հնչյունական փոփոխությունների կապը, դրանց պատճառները: Այդ վավերագրերի շնորհիվ ավելի հստակ են որոշվում հայերենում պարսկերեն փոխառությունները, ծշտվում, թե իրանական ո՞ր բարբառներից են կատարվել դրանք, և ինչպիսի՞ս է այդ բարբառների կերպարանը: Մեյեն գրում է. «Ջանի որ Հախաստանի կրած ազդեցությունը պարթևական է եղել, ուստի բառերը պետք է երևան գան հյուսիսային ձևով, և այդ դեպքում փոխառությունների առանձնահատկությունները բացատրվում են հիանալիորեն: Հյուսիսային մանիքեական պահլավերենի հնչյունական ուղազարավ առանձնահատկություններից յուրաքանչյուրը հանդիպում է

<sup>7</sup> Զ. Պատկանյան, Թե ինչ տեղ է բռնում հայ լեզուն հնդիրանական լեզուների շարքում, «Փորձ», 1880, № 3, էջ 84:

<sup>8</sup> Էդ. Արայան, նշվ. աշխ., էջ 195:

<sup>9</sup> Հ. Հյուսիսայինը, Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում, Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1965, № 4, էջ 29:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Ա. Մեյեն, Հարագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 109:

հաթրենի իրանական հին փոխառությունների մեջ»<sup>12</sup>: Մյուլլերի հրատարակած այս բնագրերի մասին արտահայտվել են նաև թեր կարծիքներ: Զալեմանը կասկածում է, թե արդյո՞ք ծիշտ է այդ բնագրային հատվածները երկու բարբառների (հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան) միջև բաժանելը: Մեյեն այս թերահավատությունը չափազանցված է համարում, թեև իր կարծիքով էլ հյուսիսային բնագրերն անխառն չեն, սակայն այնուամենայնիվ Մեյեն գտնում է, որ «նրանց տարբերակումը հաճախ հեշտ է»<sup>13</sup>: Այս պատճառով էլ Թուրֆաևի մանիքեական վավերագրերի պատահիկների հիման վրա ստուգաբանություններ են կատարում շատ լեզվաբաններ՝ Մեյեն, Բարթոլոմեն, Գոթհոն, Նաև՝ Զալեմանը, Հյուբշմանը և ուրիշներ: Այս բնագրերը հնարավորություն են տալիս վերականգնելու բազմաթիվ հայերեն բառերի սկզբնաձևեր, մի բան, որ մինչ այդ հնարավոր չէր կատարել: Այնինչ «հայերեն բառերը մեծ մասամբ փոխ են անուվել հյուսիսային բառերից, որոնք հայտնի ներկայացուցիչներ չունեն պարսկերենում: Նույնիսկ այնտեղ, որտեղ հնչյունաբանությունը մեզ չի ազդարարում, որ տվյալ բառերը հատուկ են հյուսիսին, վկայված ձևերի տեղաբաշխումն ինքնին մեզ ընձեռում է որոշ տեղեկություններ»<sup>14</sup>: Մեյեն թերում է բավական թվով բառեր (հավասար, նախարար, հրասախ, պարզեմ, վարդ, Ապանդարամետ, դժոխք, խրատ, ազատ և այլն) և ցույց տալիս, որ դրանց ստուգաբանությունները հնարավոր դարձան միայն այս վավերագրերի շնորհիվ:

Ինքը՝ Մյուլլերը ևս իր հայագիտական գործունեության ընթացքում զբաղվեց հայերեն, պարսկերեն բառերի ստուգաբանությամբ, որոնք նա զետեղեց իր «Հայկականքում» և «Մանր դիտողություններում»: Թեև Մյուլլերը հայոց լեզվի ծագման մասին Հյուբշմանի տեսությանը հակառակ էր, բայց ընդունում էր վերջինիս կատարած ստուգաբանությունները՝ գտնելով դրանք «ապահովություն» մեկնված: Նա գնահատում էր նաև Բուզգեի ստուգաբանությունները: Զգուշով բնիկ հայերեն բառերի ցանկն ստվարացնել՝ Մյուլլերը դրանց է ավելացնում իր կողմից ստուգաբանած 69 բառեր: Արդյունքը՝ 350 բառ, նա գրեացուցիչ է համարում, քանի որ «հայերենի ուսումն առ մեզ նորածին է և մասնագետ լեզվաբաններն շատ քիչը հայերենով կզբաղի»<sup>15</sup>: Այդ բառերից են՝ ակումբ, անձրև, առած, բոր, գոռոզ, եռամ, թաթ, թարեմ, լիկ և լիծ, խաղաղ, լուսան, կալ, կաղ, կողոպուտ, կորին, կրուկ և այլն: Ստուգաբանություններ կատարելիս Մյուլլերն օգտվում նաև իր նախորդներից, հատկապես Լազարոյից, և այդ բառերի վրա աստղիկ է նշանակում: Միաժամանակ, նա ծիշտ չի համարում Լազարոյի որոշ ստուգաբանությունները, օրինակ, բեհեզ բառը և այլն: Մյուլլերը քննում է այն բառերը, որոնք չկան Հյուբշմանի մոտ, իսկ որոշ բառեր ստուգաբանելիս Հյուբշմանի հետ գուզահեռ է անցկացնում: Այսպես, Հյուբշմանը կարմիր բառը համեմատում է երբայերենի հետ, բայց և միասմանակ ավելացնում է, որ երբայերեն ձևն ուշ ժամանակի ոչ բնիկ բառ է և հնարավոր է, որ այն պարսկերենից է: Մյուլլերը գրում է. «Այս կարծիքն ուղիղ կերևա, թեև իմ կարծիքով բնիկ պարսկերեն եղած չերևար, այլ հնդկերեն փոխառյալ, վասնզի կարմիր բառին և երբայականին կհամեմատեմ հին հնդկերեն krmila, որուն թեև կարմիր նշանակությունն ունենալը չի ցուցուի, բայց առաջին մասին krmil-ն կնշանակե ծծիե մը հառաջ եկած կարմիր գույնը»<sup>16</sup>:

Կամ՝ հաւ բառը Հյուբշմանը կապում է լատիներեն բաժուց, բաժո ձևերի հետ: Մյուլլերը կապում է avis-ի հետ և նշում, որ Մեյեն էլ նույն կարծիքին է: Նման համեմատությունների միջոցով Մյուլլերն ստուգաբանում է ձյութ, մորակ, փիլիսոփա, պողոտա և այլ բառերը:

Ծառ բառերի ստուգաբանություններ Մյուլլերը տալիս է պարսկերենի միջոցով: Նոր պարսկերեն biran և wiran պահվածքներն հնչվում է averan: Վերջինիս կրճատ aver ձևից են փոխառված հայերեն աներ, աներեմ բառերը: Այստեղից էլ Մյուլլերը հետևություն է անում, որ նոր պարսկերեն biran և wiran բառերը պետք է արտասանել beran, weran և այլն:

Մյուլլերը ստուգաբանում է նաև պարսկերեն մի շարք մասնիկներ և համեմատում հայերենի հետ: Ըստ Մյուլլերի զենդերեն արա մասնիկն ունի պարսից be (ան-) նշանակությունը և համապատասխանում է հայերենի ապա-ին, բայց, շարունակում է Մյուլլերը, հայերենում բացի ապա- մասնիկից կա նաև ապի, որը ծագել է ապե-ից (օրինակ՝ ապիկար, ապիդատ): Ապե-ն համազոր է փեիկիի ape, հին պարսկերեն ave և նոր պարսկերեն be-ին: Վերջինս նախադրություն է, ունի առանց նշանակությունը, ծագել է հին պարսկերեն be, ave-ից, փեիկիի լեզվում հնչում է ape, զենդերենում՝ արա: Ըստ այդմ էլ փեիկին ծանաչում է միայն ape, զենդերենը լույ աբա:

Մյուլլերի ոչ բոլոր ստուգաբանություններն են բավարար խորությամբ և մինչև վերջ կատարված, սակայն նրանց մեծ մասը հավանության են արժանացել Հյուբշմանի, Մեյեի, Ա-

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> «Հանդես ամսօրեայ», 1890, էջ 283:

<sup>16</sup> Նույն տեղում, 1894, էջ 293:

Ճառյանի և այլոց կողմից: Վերջիններս ստուգաբանություններ կատարելիս հաճախ են հիշատակում Մյուլլերին, ընդունում նրա կարծիքները և հարգանքով արտահայտվում հեղինակի մասին՝ գնահատելով նրա ծառայությունը հայերենի բառապաշարի ջննության բնագավառում:

Իր հայագիտական հետազոտություններում Մյուլլերը մեծ տեղ հատկացրեց ժամանակի եվրոպական հայագիտության աշխույժ հետաքրքրության առարկա դարձած հայ գրերի բնույթի և նրանց ստեղծման պատմությանը: Բավական լավ ծանոթ լինելով հայոց պատմությանը՝ Մյուլլերը քաղում է պատմիչների հաղորդած տեղեկություններն այս հարցի առթիվ և դրանց հիման վրա կատարում մեկնաբանություններ: 1889 թ. Վիեննայի «Արևելագիտական ուսումնաթերթում» (էջ 245—248) լույս է տեսնում Մյուլլերի «Հայ նշանագրերի մասին» հոդվածը<sup>17</sup>: Հիմք ընդունելով Ասողկի հաղորդած այն տեղեկությունը, որ Դանիել Ասորու նշանագրերը թվով ջստինն էին, և Մաշտոցն ավելացրել է յոթ նշանագիր, Մյուլլերը գտնում է, որ ավելացվածները հունարենի այբուբենի նմանորոշյալք ստեղծված ծայրավոր տառերն են: Մեջ վերաբերում է դանիելյան ջստինն գրերին, ապա դրանք ըստ Մյուլլերի ազգակից են պարսից դիվանական՝ պահլավական գրին և ծագում են արամեական աղբյուրից: Երկու տարի անց՝ 1891 թ. լույս է տեսնում Մյուլլերի մեկ այլ հոդվածը, հայերեն գրերի ծագման մասին<sup>18</sup>, ուր հեղինակը վկայակոչելով Վարդան Արևելցու «Պատմությունը», ըստ որի դանիելյան գրերը ոչ թե ջստինն են, այլ ջստներկուսը և զարմանալիորեն համընկնում են ասորական այբուբենի տառերի ջանակին: Թեև Մյուլլերը հայտարարում է, որ հայ գրերի ասորական աղբյուրը ապացուցված է, այնուամենայնիվ միաժամանակ նշում է, որ հազիվ թե հնարավոր լինի պարզել, թե հայոց գրերի հիմքում ասորական որ այբուբենն է ընկած, ջանի որ հայերեն գիրը շատ է կերպարանափոխված: Վերջինս էլ Մյուլլերին մղում է անընդհատ պրպտումներ կատարելու հայոց գրի աղբյուրները գտնելու համար: Նա ենթադրում է, որ այն կարող էր լինել հետքերիստունեական առաջին դարերի պալմիրական գիրը կամ թերևս ինչ-որ ավելի հին գրերի աղբյուր: Հայերենի ծայրավորների մասին Մյուլլերն անում է հետևյալ դիտողությունները. «Ծայրավորները հորինած է ինչ-ինչ փոխ առնելով պարսից տառերեն, և իրեն ծանոթ էր մեր ավեստական գիրը, որմե են ապահովապես ե և է: Հունական E և H նախատիպ ձևերեն չէր հնար այսպիսի նման ձևեր հանել: Բայց որովհետև մեկ կողմանե չենք գիտեր հայ տառերուն սեմական նախատիպը (յուկ ենթադրություններ կրնանք ընել այս մասին), մյուս կողմանե նաև հայ տառերու ձևափոխությունը չենք կրնար հետազոտել Մեսրոպեն (ե դարեն) մինչև Թ դար, ուստի առայժմ մեզ առաջնորդողը մնաց լուկ ազգային ավանդությունը, և պետք ենք այս վերջնույն ընծայածը խնամով կշռել և այնպես խնդրույն լուծման մտտենալ»<sup>19</sup>: Մյուլլերը գտնում է, որ հայոց գրերի ծագման մասին ամենահավաստին Ղ. Փարպեցին է, որի աղբյուրը Կորյունն է: 1891 թ. լույս ընծայած «Ղազար Փարպեցի և Կորյուն» հոդվածում Մյուլլերը ձգտում է ցույց տալ այս երկուսի միջև եղած կապի հիմքերը: Փարպեցին Մաշտոցի մասին գրելիս նշում է, որ օգտվել է Կորյունից: Մյուլլերը նշում է, որ կան Կորյունի երկու խմբագրություններ. առաջինը 1833 թ. Մամբրեի և Գ. Անհաղթի աշխատությունների հետ և երկրորդը՝ 1854 թ. «Առփերը հայկականք» հավաքածուի մանր գրոց ժԱ հատորի մեջ՝ երկուսն էլ Վենետիկում լույս տեսած: Հարցն այն է, թե Փարպեցին սրանցից որ մեկն է ակնարկում: Նուրբ և տրամաբանական փաստարկումներից Մյուլլերը հանգում է այն եզրակացության, որ Փարպեցին օգտվել է այն նյութից, որը հետագայում լույս է տեսել 1833 թ.: Այս պատմության մեջ նա կարևոր է համարում այն մասը, ուր Փարպեցին (նաև Կորյունը) պատմում է Մաշտոցի՝ գրերն աստվածային գորոքյալք ստեղծելու մասին: Մյուլլերը նշում է, որ սա նշում է նաև Ռորենացին, և պատահական չէ, ջանի որ Փարպեցին հայտնապես շատ է օգտվել Ռորենացուց և Եղիշեցի՝ շատ անգամ առանց աղբյուրը հիշատակելու: Այս աղբյուրների համեմատությամբ, ինչպես նաև ի նկատի ունենալով, որ Փարպեցին նրան Մաշտոց է անվանում, ինչպես 1833 թ. հրատարակությունում է, և ոչ թե Մեսրոպ, Մյուլլերը գտնում է, որ Փարպեցին օգտվել է Կորյունի 1833 թ. տարբերակից: Այս վարկածի օգտին է խոսում մի այլ հանգամանք ևս. Փարպեցին Մաշտոցի մահը դնում է Սահակ Պարթևից վեց ամիս հետո՝ 13-ին մեհեկան ամսի: Այդպես է ավանդում 1833 թ. հրատարակված «Կորյունում», մինչդեռ ըստ 1854 թվականի՝ Մաշտոցը վախճանվել է ամսի 17-ին:

Համարյա մինչև իր կյանքի վերջը Մյուլլերը շարունակեց զբաղվել հայ գրերի հարցով, որին նա նվիրեց ոչ միայն առանձին հոդվածներ, այլև անդրադարձավ տարբեր առիթներով: 1894 թ. Վիեննայի «Արևելագիտական ուսումնաթերթի» վերջին համարի «Մանր տեղեկություններ» բաժնում հայոց լեզվի տարբեր հարցերի վերաբերյալ դիտողությունների հետ միաժամանակ նա անդրադառնում է հայերենի բաղաձայններին, մասնավորապես ջ և խ տառերի ծագ-

<sup>17</sup> Տե՛ս հայերեն թարգմանությունը՝ «Հանդես ամսօրեայ», 1889, էջ 86—87:

<sup>18</sup> Տե՛ս հայերեն թարգմանությունը՝ «Հանդես ամսօրեայ», 1891, էջ 68—70:

<sup>19</sup> Նույն տեղում:

մանը: Չգտելով ապացուցել, որ Մաշտոցն այլուբերն ստեղծել է ավետական գրի հետևողությամբ, Մյուլլերը բերում է նոր ապացույցներ: Համեմատելով հայերեն և ավետական ք և խ տառերը՝ նա ցույց է տալիս սրանց գծագրական նմանությունները, միաժամանակ գտնում է, որ այնուհետև դրանք կոկվել են «հունարեն գեղագրական ազդեցությամբ», որի հետևանքով հայերեն խ տառը բարձրացվեց ի, կ տառերի բարձրության: Հունական գեղագրության ազդեցության մասին է խոսում նաև նույն 1894 թ. «Հայերենի ձայնավորների ծագումը» հոդվածում, ուր գրում է. «Պետք է նաև մտածել, որ մեկ կողմանե հայ տառերուն հնագույն և եսխնական ձևն անձանոթ է մեզի և մյուս կողմանե հայ տառերուն ձևը հետզհետե հունական գեղագրության ազդեցության ներքո փոխվեցավ: Առաջին չորս տառերու՝ ա, ե, է, ը ավետական համապատասխան նշանագրոց հետ նույն ըլլալը ցուցման կարոտ չէ. ի և ո տառերուն մեջ կգտնենք ավետական նշանագիրքն ծախ դարձած և այդ ձևով կանուն գրված, իսկ ւ տառին մեջ կերևա թե ավետական նշանագիրը մյուս կողմը շրջված է»<sup>20</sup>: Ջենդերենի և փեիլիսի այբուբենի մասին խոսելիս նա գենդերենի երկու ձայնավոր տառեր՝ կարծ e-ն և երկայն e-ն փոխառություն է համարում հունարենից և գտնում, որ դրանցից հայերենում ձևակերպվել են ե, է տառերը: Որ ձայնավորները հունարենի հետ կապ չունեն, Մյուլլերը փորձում է ապացուցել նաև այլ փաստարկներով: Նա բերում է Սահակի նամակը Թեոդորոս կայսերն այն առթիվ, որ հունական իշխանության հպատակ հայերն ու հույները գրերի գյուտին դեմ էին: Նույն տրամադրությունն է արտահայտված նաև կայսեր՝ Սահակին ուղղած պատասխան նամակում. «Ես առաւել լայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարոքս որ ի մերում քաղաքիս յԱսորեաց ոմանց խնդրեից զհմաստից զհասու: Վասն որոյ ածեալ էաք ընդ մերոյ ծառայիցսդ արհամարհել զայսպիսի ուսմամբ, բայց զի լետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, թէ կատարումս արուեստիդ ի շնորհաց վերնոյն եղև, գրեցաք՝ զի ամենայն փութով ուսցին և զքեզ պատուով ընկալցին որպէս զարդարեւ փարդապետս իրեանց, հաւագոյն արքեպիսկոպոսին Կեսարոս»<sup>21</sup>: Մյուլլերը նշում է, որ նույն բանն է հաստատում նաև Խորենացին, և բերում է հառվածը. «Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ եւ բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս և հրամանաւ Վոսմշապիոյ և մեծին Սահակայ՝ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջուսժունս, փափկաձայնս եւ երկարոցիս եւ դպրոցս կարգեաց յամենայն գաւառս եւ ուսոյց զբնաւ կողմանս բաժնին Պարսից, բայց ի Յունաց մասնն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յաթոռն Կեսարոս, վարել յունական դպրութեամբ և ոչ ասորով»<sup>22</sup>: Բերելով այս փաստարկները՝ Մյուլլերը հայտարարում է, որ հայերենի այբուբենը նախապես գերծ է եղել հունական ազդեցությունից, որ եթե լիներ նման ազդեցություն, ապա Սահակն ու Մեսրոպն անպայման մատնացույց կանէին այն և կլռեցնէին հակառակ կողմին: «Այն, որ չըրին այսպես, կցուցնէ, որ ոչ թե արևմուտք՝ ի Բյուզանդիոն, այլ Արևելք՝ յԱսորիս և ի Պարսս փնտրելու ենք այն սերմանքն, որունցմե զարգացած է հայերեն այբուբենը»<sup>23</sup>:

Հայերենի այբուբենի մասին Մյուլլերի արտահայտած կարծիքներում առկա հակասությունները սոսկ տարբերակով բնույթ չեն կրում, դրանք նաև հետևանք են գրերի գյուտի մասին մեր պատմիչների հաղորդած տեղեկությունների մեջ եղած տարբերություններին, երբեմն նույնիսկ հակասություններին: Որ Մյուլլերն իր ողջ գիտական գործունեության ընթացքում անընդհատ անդրադարձել է հայոց գրերի հարցին, ցույց է տալիս, որ ինքն էլ չի բավարարվել իր եզրահանգումներով և անընդհատ ձգտել է նորանոր փաստերի օգնությամբ հնարավորության սահմաններում ծշտագույնի հասցնել այն: Մյուս կողմից, որքան էլ Մյուլլերն աշխատում էր փաստարկներով ապացուցել իր կարծիքը, երբեք դրանք չէր պարտադրում ուրիշներին: Նա ուշիուշով հետևում էր այլ գիտնականների, հատկապես ժամանակակիցների արտահայտած ավելի հավաստի կարծիքներին և օգտագործում դրանք: Այդպես, նա իր տեսության մեջ բավական բան է վերցրել Լանգուայի, Էմինի, Հյուբշմանի ուսումնասիրություններից:

Մյուլլերի հայագիտական գործունեությունը սակայն չի սահմանափակվում միայն լեզվաբանությամբ: Ուսումնասիրելով հայոց լեզուն՝ նա բնականաբար ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից սկսած: Խորենացու, Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու, Կորյունի, Ղևոնդի, Ստեփանոս Սյունեցու, Թովմա Արծրունու, Ասողիկի, Վարդան Արևելցու, Առաքել Դավրիժեցու և այլոց աշխատությունների քաջատեղյակությամբ Մյուլլերը հիացնում էր իր հայ բարեկամներին (Բ. Բաժմաշառ, Զարբանալյան, Վոսմ և այլք): Մյուլլերն իր ձեռքի տակ ուներ հայ մատենագրության սեփական ձեռագիր նմուշներ՝ Ղ. Փարպեցու պատմությունը, Ոսկեփորիկի տարբեր հազվագյուտ օրինակներ և այլն<sup>24</sup>: Նա ուշիուշով հետևում էր հայ

<sup>20</sup> «Հանդես ամսօրեակ», 1894, էջ 244:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 245:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>24</sup> Տե՛ս «Բիւզանդիոն», Բ տարի, էջ 313:



պատմիչների աշխատությունների լույս ընծայմանը և հանդես գալիս գրախոսություններով, եվրոպացի ընթերցողին բավական մանրամասն տեղեկություններ հաղորդում յուրաքանչյուր պատմության և նրա հեղինակի մասին:

Քանի որ հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության անչլովոր յուրաքանչյուր աշխատանք արժանանում էր Մյուլլերի ուշադրությանը, ուստի Վանի սեպագիր արձանագրությունների լույս աշխարհի գալուն Մյուլլերն իսկույն արձագանքում է մի հոդվածով: Նա գտնում է, որ Վանի արձանագրությունները հավանորեն մեզ են ներկայացնում նախագրաբարյան լեզուն, ինչպես կարծում էր նաև Մորթմանը:

Մյուլլերն արժ օտարազգի գիտնականներից էր, որոնց համար հայոց լեզուն սոսկ գիտական ուսումնասիրության նյութ չէր, և նա «ոչ թե գիտեր միայն հայերենը, ինչպես գիտեն շատ մը ուսուցիչներ լոկ գրով, այլ գիտեր բանիվ և գրով»<sup>26</sup>: Ինչպես նշում են ժամանակակիցները, «Հայ գրականությունը կճանչնա խիստ լավ: Մեր լեզուն գիտե, իբրև թե բոլոր կյանքն անոր ուսումովն անցուցած ըլլար: Արդի աշխարհաբարը, սակայն, օհնք չի հրապուրեր այնքան, և գրաբար կխոսի»<sup>26</sup>: Օտարազգի համարյա բոլոր հայագետների նման Մյուլլերն ուներ հայ բարեկամներ և կենդանի կապի մեջ էր նրանց հետ: Այդ կապը հաճախ արտահայտվում էր նամակագրությամբ, որի շնորհիվ այսօր մենք կարող ենք դատել հայոց լեզուն գործնականորեն տիրապետելու Մյուլլերի ունակությունների մասին: Փարիզաբնակ կարապետ Բասմաջյանը, որը մոտ հարաբերությունների մեջ էր իր ժամանակի մեծավաստակ օտարազգի հայագետների՝ Մեյքեի, Հրաբմանի, Մյուլլերի և այլոց հետ՝ Մյուլլերի մահվան կապակցությամբ «Բազմավեպում» հրատարակում է մեծ հայագետի իրեն ուղղված նամակները՝ համարելով դրանք «պսակ մը Ֆր. Մյուլլերի սերեզմանին վրայ»: Բասմաջյանը գրում է. «Այս թողոք մեծ պիտի տեսնեն ընթերցողը մեծահամբավ արևելագետին ունեցած հմտությունն մեր գրաբար լեզվի, որով ոչ միայն կգտեր գրչի ճկունությունը, այլև կխոսեր հավասարապես»<sup>27</sup>:

Մյուլլերի՝ հայոց լեզվին այսպիսի հմտությամբ տիրապետելը միայն գիտական հետաքրքրության արգասիք չէ: Մեծ հայագետը և իր հայ բարեկամների հետ անմիջական, անձնական շփման և այլ պատեի առիթներով արտահայտել է ոչ միայն իր սերն ու համակրանքը հայ ժողովրդի նկատմամբ, այլև բարձր գնահատել նրա հնությունը, մշակույթը ընդհանրապես: «Հայ ժողովուրդը կառույց գերիտոնություն ընդունած ըլլալով՝ միշտ ավելի արևմտյան, քան արևելյան կողմ միտած է՝ նաև, ինչպես յուր բազմարկած աղետալից պատմությունը կվկայե, ի վնաս յուր քաղաքակրթությանը, որ վերջացավ հրեից քաղաքակրթության նման հայազգի ժողովուրդոց ալ վայրավարտին ցովելովը: Երբ այսպես արտաքին հարաբերություններն իսպառ վատթարացան, ազգը յուր մտադրությունն առաքելապես յուր ներքին կենաց վրա դարձուց և նոր ժամանակներս յուր ճոխ մատենագրության վրա: Եվ միջոցե ուրիշ ազգեր ի կորուստ կդիմեին, ինքն հոս ոգի կովան մը գտավ, որով կարող կըլլալ յուր ապագային վրա զվարթ աչքը նայիլ և արդի քաղաքակրթության բարեմասնությանց մասնակից ըլլալ»<sup>28</sup>:

Ղևոնդի և Ասողիկի պատմությունների 2-րդ տպագրության առթիվ ողջունելով հայ մատենագրության գոհարների լույս ընծայումը և արժանին հատուցելով հրատարակության ծախքերը հոգացող Հովսեփ Իզմիրյան Ղվարթեցուն՝ Մյուլլերը գտնում է, որ այսպիսի գործի ձեռնարկության հովանավորությունը պատիվ է թե՛ ազնվաբարր մեկենասին և թե՛ յուր ազգին: Նա գրում է. «Տղանդապար, բայց բազմավիշտ հայ ազգն այժմյան գրից մեջն ալ սիրող է և հետամուտ յուր ազգային մատենագրության»<sup>29</sup>:

Այսպես է գնահատել հայ ժողովրդին, նրա լեզուն ու մշակույթը գերմանացի մեծ գիտնական Ֆրիդրիխ Մյուլլերը:

Э. Л. МКРТЧЯН—Арменоведческая деятельность Фридриха Мюллера.— Фридрих Мюллер (1834—1898)—австрийский языковед, специалист по санскриту и сравнительному языкознанию, проф. Венского университета, представитель школы лингвистической этнографии, автор книги «Очерки языкознания», в которой даны краткие сведения о грамматическом строе многих языков мира. Основную часть своей научной деятельности Мюллер посвятил изучению армянского языка, его фонетики, лексикологии, грамматики. Он также попытался определить положение армянского языка в кругу индоевропейских языков. Особенно интересны его работы, посвященные созданию армянских букв.

<sup>26</sup> «Հանդես ամսօրեայ», 1898, էջ 188, մահախոսական:

<sup>26</sup> «Բազմավեպ», 1898, էջ 487:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 481:

<sup>28</sup> «Հանդես ամսօրեայ», 1887, էջ 167:

<sup>29</sup> «Հանդես ամսօրեայ», 1888, էջ 130: